№ 47 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 47

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն է 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան. առանձին համարները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դուռում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թւման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran, Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում բանկացողները կարող են դրուել Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Ելիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում Գաբրիել Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում Մելքոն Խալափեանցի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դանդաղութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ խմբագրութեան: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ —Փայտակարան կամ Ղարաղաղ:

ԴԱՆԴԱՂՈՒԹԻՒՆ

—

«Յապաղումը ժամանակի գողն է».
«Ժամանակը Աստուած է.
Եունկ Փիլիսոփայ.

Գոյութեան կռիւը մի համաշխարհային օրէնք է. օրէնք բոլոր արարածների, թէ բոյսերի, թէ կենդանիների և թէ մարդկանց համար. վատ թէ լաւ, նա է առաջադիմութեան պատճառը:

Կեանքը մի ճաշի սեղան է. ով շուտ կը հասնի՝ կուտի աւելի շատ և աւելի լաւ կտորները. ծանր եկողը կամ փշրանք կը գտնէ և կամ քաղցած մնալով կը ոչնչանայ. որովհետև ապրելու համար ուտել է պէտք, կեանք ունենալու համար՝ նրան պահպանելու ոյժ:

Հայկական առածը ասում է „ով չուստ, նա կուշտ“. իսկ ընկերական և բնական այլ օրէնքներ ցոյց են տալիս, որ իրանց գոյութիւնը պահպանել չը կարողացող արարածները այնպէս են ոչնչանում, որպէս մի կաթիլ ջուր ծովի մէջ:

Պատմութեան ընթացքում՝ այն ազգերը, որոնք դրոշմուած են եղել անշարժութեան և կամ դանդաղութեան կնիքով, նրանք ոչնչացել և ջնջուել են:

Հնումն դեռ գոյութեան կռիւը այնքան խիստ չէր որքան այժմ, որովհետև ոչ միայն մարդիկ իրանք շատանում են, այլ և նրանց պէտքերը աճում են և հետևաբար այդ պէտքերի ձեռք բերելու փափագն էլ խստանում է նրանց մէջ: Մարդիկ այժմ այլ ևս չեն բաւականանում լոկ „ապրելով“, ինչպէս որ լինէր: Ո՛չ, նրանք կամենում են նաև գոհացնել իրանց ամէն տեսակ պէտքերը:

Այդպիսի ընթացքը բնականաբար առաջացնում է մի սոսկալի մրցում: Մեր նախնիք, շնորհիւ իրանց պակաս հասկացողութեանը՝ իրանց սահմանափակ մրտքի, ունէին նաև սակաւ պէտքեր: Մի խրճիթ, մի ծածկոց և մի կտոր հաց բաւականանում էր նրանց. իսկ այժմ այդպէս չէ. մարդիկ զարգանում են. քանի մարդը քաղաքակրթուած է, այնքան նա աւելի պէտքեր է ունենում... պէտքեր, որոնք վերջ ի վերջոյ դառնում են այնքան անհրաժեշտ և այնքան արմատանում են նրանում, որ ամբողջ ուղեղը, ամբողջ ոյժը նա գործ է դնում ձեռք բերելու, գոհացնելու նրանց:

Եւ ահա ծագում է մրցում. ուժեղները ճզմում են թոյլերին և թոյլերը ոչնչանում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Փայտակարան կամ Ղարաղաղ գաւառը

—

Ղարաղաղցիք այդ բոլորը հասկանում են, բայց նոքա չունին եւ այն առաւելութիւնը, որ կարողանան իմանալ թէ ինչպէս եւ որտեղից պէտք է բերել ուսուցիչը, կամ ինչ ձեւով պէտք է վարուիլ նորա հետ. վարժարանը ինչպէս շինել, ինչ դասեր պէտք է տրուի նոցա եւ այլն եւ այլն:

Հէնց այս է պատճառը որ մի քանի տեղերում եղածներն էլ մէկ երկու տարուց աւելի գոյութիւն չեն ունենում. երբ տարուայ վերջը ծնողները տեսնում են, որ որդին մի նամակ գրել չէ կարողանում եւ կամ ուսուցչի չափ չը գիտէ, նրան առանց հասկանալու բուն պատճառը, սկսում են մեղադրել ուսուցչին թէ լաւ չէ սովրեցրել եւ այսպիսով ամբողջ վարժարանը տակն ու վերայ է լինում:

Ղարաղաղցիք, ինչպէս ասացինք առաջներում, կարօտում են մի առաջնորդի, որ, բացատրէ հասկացնէ նոցա, նոքա պատրաստ կլինին ամեն բան յանձն առնելու:

Սորա համար ղարաղաղցիների յոյսերը դրած են իրանց Դավրիժաբնակ հայրենակիցների վերայ, թէ մի օր նոքա ընից արթնանալով ուշք պէտք է դարձնեն իարնց ծննդավայրի եւ հայրենիքի վերայ ուղարկելով նոցա ուսուցիչներ, առաջնորդներ, նիւթական օգնութիւններ եւ այլն:

Այս մասին հարկ եմ համարում այս տեղ գրելու Մելիք Սարգսի արած զանգատը Դավրէժաբնակ ղարաղաղցիների վերայ, երբ ես նորան յորդորում էի, որ իրանք առաջնորդ լինելով ժողովրդին, պէտք է յորդորեն նոցա եւ իրանք պէտք է լինին ձեռնարկողը վարժարան եւ այլ ազգային գործերի, ուրիշի վերայ յոյս դնել եւ սպասել, ոչ մի օգուտ չի բերել իրանց:

Մելիքը սկսեց այսպէս խօսել:

»Թէպէտ եւ մենք ղարաղաղցիներս հասկանում ենք, որ մեզ հարկաւոր են վարժարաններ, ուսում, կրթութիւն, թէպէտ մեր ժողովուրդը այդ մասին ոչինչ չէ խնայում, բայց նա միանակ հասկանալով ոչինչ չէ կարողանում գործադրել. նա տգէտ է, նա չը գիտէ թէ ինչ ձեւով պէտք է սկսի որ կարողանայ առաջ տանել եւ այլն:

Այս բոլորը ունենալու համար մենք պէտք ունինք

Տնտեսական մի կատաղի մրցում դառնում է որպէս ամենաէական պայման, որ ղեկավարում է մարդկութեան։

Այդ մրցման օրէնքի վերայ է ահա որ կազմուել են դասակարգեր, ուժեղներ և թոյլեր, պարազիտներ և հաբեատհարիչներ, կուսակցութիւններ... և գոյանում են արիւնահեղ պատերազմներ։

Ամբողջ կեանքը իր հանգամանքներով, տիեզերքն ամբողջ, տնտեսական առանցքի շուրջն է պտտում, նրանով դարբնուում և նրանից ստանում իւր էնէրգիան (énérgie)

Ընկերութիւններ և ազգեր կազմուում են այդպիսի տնտեսական հանգամանքների ուժով։ Մրցումը անձերից տարածուում է ազգերի մէջ, ընդհանրանում։

Այն ազգը որ հնարում է իւր գոյութիւնը պահպանելու համար միջոցներ աւելի շուտ և աւելի ճարպկօրէն, այն մարդը, այն հասարակութիւնը, որ շարժուում է աւելի արագ, նա ապրում է, նա զօրեղանում է, ամրապնդուում, իսկ միւսը՝ դանդաղն ու անճարակը՝ ընկնում է, քայքայուում և իւր վերայ ոչնչացող անգամ չէ ունենում, որովհետև նրա անկումն ու ոչնչացումն համարուում է բնական։

Կեանքի բնական ընթացքն ուրեմն, ցոյց է տալիս, որ դանդաղութիւնը նոյնքան մահաբեր արդիւնք ունի, որքան որ անշարժութիւնը։ Գէօթէն ասում է՝ „ազգեր կործանող յատկութիւններն են դանդաղութիւնը և տարաձայնութիւնը“։

Հարկաւոր է ոչ միայն շարժուիլ գիտենալ, այլ մինչև իսկ արագ շարժուիլ, շտապել, գրեթէ վազել. հարկաւոր է ինչ գնով որ լինի, ձեռք բերել արագ գործելու միջոցներ։

Այդպէս ենք մենք Հայերս։ Մեր որ մի հասարակական գործն է որ չէ կրում դանդաղութեան և նոյն իսկ անշարժութեան կնիք, որ մէկն է որ հոտելու աստիճանի չի հասել. մեր տնտեսական ոյժերը ծլատում են անմիտ բաների, հացկատակների կերակրելու, իսկ մտային ոյժերը՝ տգիտութիւնների վրայ շռայլելու։ Ո՞ր մի հիմնարկութիւնն է որ ուրեմն ոչնչութիւնը, դանդաղութիւնն ու տիրացուական զգացմունքները նրա մէջ ինստինկտ (բնազդում) են դարձել, նրա հասարակական խնդիրների հիմքն են կրծում և եթէ անգութ ժամանակը իւր սուր գերանդիով հնձի, ոչընչացնի նրա գոյութիւնը, պրօֆ. Նովիկովի պէս նշանաւոր ընկերաբանները այդ տեսնելով իրաւամբ պիտի ասէին թէ՝

«Ազգերի մրցումը մի ծիարշաւի է նմանում, ով աւելի արագ է քայլում յաղթողը նա է. ետ մնացողի մահը խիստ բնական է»։

Ետ ենք մնում, մեր ոյժերը փոխանակ մեր ընթացքը արագացնելու, մեր դանդաղութիւնն են արագացնում. դանդատի էլ տեղիք չունինք ուրեմն, եթէ ոչնչանում ենք։

Մահայուցիչ ճնշում է պատճառում ամեն հայի՝ այդ եզրակացութիւնը։ Որքան ուրախ կը լինէինք, որքան, եթէ մեր ասածները և այդ եզրակացութիւնը՝ սխալ լինէին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակներ խմբագրութեան

—

Շիրազ 28 Նոյեմբ. 94

Հաճեցէք տեղ տալ ձեր լրագրի մի անկիւնում հետևեալ ծանօթութիւնը։

Քանիցս անգամ Շիրազայ վերաբերեալ եկեղեցապատկան և քահանայի անմխիթար կացութիւն և ս. եկեղեցոյ տուների անվարձ նստելու մնալու և նրանց քակման դրութիւնը յայտնեցինք որպէսզի նորին բ. Սրբազնութեան—բարեհաճէ կանոնադրել, սակայն տխուրենք մինչ այժմ, որովհետև ոչ մի կարգադրութիւն դեռ չէ եղած թէ քահանայի և թէ եկեղեցապատկան տուների մասին։

Որպէս ձեր 34 համար լրագրի մէջ յայտնուած էր, տեղւոյս ս. եկեղեցին ունի երկու կառավարիչք, որոնց մէկն բացակայ է և միւսն թէև ներկայ, բայց անկախ կը գործէ, որպէս լսում ենք վերջինն իւր հրաժարականն ուղարկած է Սրբազանին։

Այսօր 10—14 տարի է որ ոչ մի ժողով չէ եղած և հաշիւներն չէ ցոյց տուած. քանի ժամանակ առաջ 800 ղրան էտուած ինչպէս պարտք հանգուցեալ պ. Աբեդ Ս. Մելքումեանին և ահա այս գումարն ։ րուստ է դնացած։

***

Կալկաթա 10 Նոյմբ. 94

„Շաւիղ“ շաբաթաթերթի 35-երորդ թուին մէջ հրատարակուած կարդացինք մի յօդուած Շիրազից գրած, Մ. Յ. Ամիրխանեանց ստորագրութեամբ։ Ի պատասխանի նախընթաց թուի դիտողութիւններին զորս „Ուղևորն“ իւր թղթակցից Մ՝ օհամէդայ ճամբորդութեան տեղեկագրին մէջ ասում էր Շիրազաբնակ հայերի վերաբերութեամբ։

Պ. Յօդուածագիրն ի պաշտպանութիւն իւր համաքաղաքացիներին իւր ձեռքումն միմիայն փաստ է բռնում Շիրազու հայերի այսքան ժամանակ ունեցած հիւրասիրութիւնը դէպի ճամբորդ հայերն և այդպիսով ջրել է կամենում „Ուղևորի“ գրածն։

Տնտեսական մի կատաղի մրցում դառնում է որպէս ամենաէական պայման, որ ղեկավարում է մարդկութեան։

Այդ մրցման օրէնքի վերայ է ահա որ կազմուել են դասակարգեր, ուժեղներ և թոյլեր, պարազիտներ և հաբեատհարիչներ, կուսակցութիւններ... և գոյանում են արիւնահեղ պատերազմներ։

Ամբողջ կեանքը իր հանգամանքներով, տիեզերքն ամբողջ, տնտեսական առանցքի շուրջն է պտտում, նրանով դարբնուում և նրանից ստանում իւր էնէրգիան (énérgie)

Ընկերութիւններ և ազգեր կազմուում են այդպիսի տնտեսական հանգամանքների ուժով։ Մրցումը անձերից տարածուում է ազգերի մէջ, ընդհանրանում։

Այն ազգը որ հնարում է իւր գոյութիւնը պահպանելու համար միջոցներ աւելի շուտ և աւելի ճարպկօրէն, այն մարդը, այն հասարակութիւնը, որ շարժուում է աւելի արագ, նա ապրում է, նա զօրեղանում է, ամրապնդուում. իսկ միւսը՝ դանդաղն ու անճարակը՝ ընկնում է, քայքայուում և իւր վերայ ոչնչացող անգամ չէ ունենում, որովհետև նրա անկումն ու ոչնչացումն համարուում է բնական։

Կեանքի բնական ընթացքն ուրեմն, ցոյց է տալիս, որ դանդաղութիւնը նոյնքան մահաբեր արդիւնք ունի, որքան որ անշարժութիւնը։ Գէօթէն ասում է՝ „ազգեր կործանող յատկութիւններն են դանդաղութիւնը և տարաձայնութիւնը“։

Հարկաւոր է ոչ միայն շարժուիլ գիտենալ, այլ մինչև իսկ արագ շարժուիլ, շտապել, գրեթէ վազել. հարկաւոր է ինչ գնով որ լինի, ձեռք բերել արագ գործելու միջոցներ։

Այդպէս ենք մենք Հայերս։ Մեր որ մի հասարակական գործն է որ չէ կրում դանդաղութեան և նոյն իսկ անշարժութեան կնիք, որ մէկն է որ հոտելու աստիճանի չի հասել. մեր տնտեսական ոյժերը ծլատում են անմիտ բաների, հացկատակների կերակրելու, իսկ մտային ոյժերը՝ տգիտութիւնների վրայ շռայլելու։ Ո՞ր մի հիմնարկութիւնն է որ ուրեմն ոչնչութիւնը, դանդաղութիւնն ու տիրացուական զգացմունքները նրա մէջ ինստինկտ (բնազդում) են դարձել, նրա հասարակական խնդիրների հիմքն են կրծում և եթէ անգութ ժամանակը իւր սուր գերանդիով հնձի, ոչընչացնի նրա գոյութիւնը, պրօֆ. Նովիկովի պէս նշանաւոր ընկերաբանները այդ տեսնելով իրաւամբ պիտի ասէին թէ՝

«Ազգերի մրցումը մի ծիարշաւի է նմանում, ով աւելի արագ է քայլում յաղթողը նա է. ետ մնացողի մահը խիստ բնական է»։

Ետ ենք մնում, մեր ոյժերը փոխանակ մեր ընթացքը արագացնելու, մեր դանդաղութիւնն են արագացնում. դանդատի էլ տեղիք չունինք ուրեմն, եթէ ոչնչանում ենք։

Մահայուցիչ ճնշում է պատճառում ամեն հայի՝ այդ եզրակացութիւնը։ Որքան ուրախ կը լինէինք, որքան, եթէ մեր ասածները և այդ եզրակացութիւնը՝ սխալ լինէին...

Մեր հայրենակից եղբայրներից որոնք բնակուում են Դավրիժում։ Նոքա պէտք է մեղ քաջալերէին, մեզ յոյս տային եւ իրանք էլ մի կողմից օգնելով, այս օր մենք ունեցած կը լինէինք այն բոլորը, ինչ որ մեր ժողովուրդը դեռ նոր է հասկանում, այն էլ գործադրել չէ կարողանում։

«Մեր երիտասարդները գնային ուսում առան, դարձան ուսումնականներ, վարժապետներ, շարունակեց մելիքը, այժմ առատ ոռճիկներով յղփանում են, եղան զանազան տեսակ արհեստաւորներ, բայց դոցանից ոչ մէկը չըյիշեց իւր հայրենիքը. հարուստ վաճառականը խնայից իր դրամը, ուսումնականը իր ուսումը, երիտասարդը չըտուեց իւր եռանգը, չը խրախուեց իւր հայրենակից եղբայրներին, արհեստաւորը չդարձաւ եւ չսորվեցրեց, չտարածեց իր արհեստը Ղարադաղում եւ հերիք չէ, որ իրանը չին արել, ուրիշ անողներին էլ արգելք են դառել։

Այս խօսքերը արտասանելիս Մելիքի աչքերից կարծես կայծակ էին թափում. երբեմն բարկանալով երբեմն էլ մեղմանալով սրտաբուղխ խօսքերի հետ արտասուքներ էր դուրս դափում։

Այս բոլորը տեսնելուց յետոյ, վերջին հրաժեշտս տուի Փայտակարանին եւ հեռացայ տխուր ու տրտում Ղարադաղից։

Վերջ.

Բ. Տէր Սարգսեանց

Շիրազցիների հիւրասիրութեան վերայ տարակոյս չկայ՝ այդ մենք խոստովանում և յարգում ենք։ Բայց հարցանելի է, նոցա ունեցած այս գովելի բարեմասնութիւնն կամ ժամանակաւ յառաջ մի „ուղեւորի“ եղբօր ծախս տալն (որն անստոյգ տեղեկութիւն է) կարող է պատասխանել այն հարցին թէ 12 ընտանիքից բաղկացած մի հարուստ ժողովուրդ՝ ինչպէս է որ չէ յօժարում իւր առատասրտութիւնն և քսակն իրարու հետ հաշտեցնել և գոնէ իւրեանց վիճակաւոր քահանայի աղքատիկ ռոճիկն կանոնաւորապէս հատուցանել. այսպիսի դէպքում խեղճ քահանան մեղաւոր է հանդիսանում իւր ժողովրդից նեղատնեը անելով։

„Շաւղի“ 34-րդ թիւն արդէն պարզ ցոյց է տալիս մեզ թէ ովքեր են Շիրազու ազգային գործերի տյս օրինակ խառն վիճակի մէջ թողնող հեղինակներն. ուստի մենք առիթ ենք գտնում հրաւիրել այդ անձնաւորութիւններին՝ ամբողջ օրուան մի քանի բոպէներն զոհել և իւրեանց կամովն ստանձնած և հսկողութեան ներքոյ առած խառն ազգային գործերը կարգի տակ մտցնելու։

Եւ մենք ուղեւորներս մի ուրախալի երևոյթ պիտի համարենք թէ որ մեզ փոխարէն՝ շիրազաբնակ հայերն միանային և իւրեանց երեխաների համար մի փոքրիկ դպրոց հաստատէին գէթ հայերէն լեզուին մէջ կրթելու նոցա, այն ժամանակ եկեղեցւոյ սրահն մտնող և ելնող ճամբորդից պ. Յոգուածագիրն իրաւունք կունենայ օգնութիւն պահանջել, որն ըստ կարեաց պիտի տրուէր։

Դրոշմ

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ հինգշաբթի, փոխանակ երկուշաբթիի, որպէս հաղորդել էինք մեր նախորդ թուով, Վեհափառ Շահը պատուեց իւր բարձր այցելութեամբ, քաղաքի արքունական բազմարուեստեան դպրոցը։ Նորին Վեհափառութիւնը ի միջի այլոց զինուորական վարժութիւնները և կրթութիւնները դիտելուց յետոյ, մեծ գոհունակութեամբ բաժանուեց։ Նորին Վեհափառութեան բարձր հոգածութեան առարկան է լուսաւորութիւնը տարածելու ամեն մի միջոց, մասնաւորապէս արքունական բազմարուեստեան դպրոցը, որի մասին գուցէ պատեհութիւն կունենանք յաջորդ թուերում մի ընդարձակ տեղեկութիւն նուիրել։

—

Ինչպէս լսում ենք, երկուշաբթի դեկտ. 12-ից սկսած վերաբացուելու է Վանաքի դպրոցը։ Ցանկանում ենք յաջողութիւն։

—

Դավրէժից մեզ գրում են։ Լսում ենք, որ Սալմաստի փոխանորդ արեղան իւր գործունէութիւնով այնքան յառաջադիմելէ, որ իրեն թոյլ է տուել Քոհնաշար-գիւղում երեք կանայք թաղկել տալու, որի ձեռքից հազիւ հազ կարողացելեն ազատել թիւրքերը։

—

Ինգելիի մեր թղթակիցը գրում է, որ այնտեղ եղած հրդեհի վնասը հասնում է երկուհարիւր հազար թուման։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ոչ միայն հայկական, այլև օտար թերթերը, սաստիկ զբաղուած են հայի կեանքի մէջ եռեան եկող նոր հարցերով։

Հասարապէս թէ „Մշակը“ թէ „Նոր-Դարը“ և թէ „Արձագանքը“ արտատպում են ու թարգմանում դրան վերաբերեալ ամեն մի հեռագիր և կամ յօդուած։

Մենք ոչ միայն չենք կարող նոյնը անել, այլ և ստիպուած ենք միայն նրանց կարդալու խորհուրդ տալովը բաւականանալ։ Անհրաժեշտ է ամեն մի հայի կարդալ այս շաբաթուայ հայկական բոլոր թերթերը։

*** Ստացանք „Մուրճ“ ամսագրի № 10-ը, որ բովանդակում է մի քանի թարգմանական վէպիկներ, Յակովբ Յակովբեանի այս անգամ յաջողուած մի բանաստեղծութիւնը, տաղանդաւոր հայ բանաստեղծ Շանթի մի գողտրիկ ոտանաւորը, (այս երիտասարդը այժմեան մէկակ հայ բանաստեղծն է, որին կարելի է ախորժանօք կարդալ) և գեղարուեստական գրուածքները լրանում են երկու հատ էլ ինքնուրոյն վեպիկներով, մէկը յայտնի նկարիչ Բաշինջաղեանինը („Մուրացկաններ“), իսկ միւսը Վ. Փափազեանցինը („Մեծ փականք“)։ Դրանից յետոյ կան երկու գիտական-ժողովրդական գրուածքների շարունակութիւնը, մի տնտեսական... և էլի հայ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում ենք երես 1465 և 1496-ի գրուածքների վրայ։

„Զանազան լուրերում“ „Մուրճը“ ունի մի քանի հետաքրքիր լուրեր։

Ամենից առաջ մարդու զայրացնում է այն, որ բագուցի Առաքել ապեր Ծատուրեանը 5000 ռուբլի է նուիրել Էջմիածնին—մի վանքի, երբ այդ 5000 ռուբլին 500 հայ կազատէր ով գիտէ որպիսի դրութիւնից։ Եթէ այդպիսի հարուստներ շատ կան Կովկասում, խորհուրդ կը տայինք ամեն մէկին, որ 5000-ական ռուբլի նուիրէին աւերակ վանքերը ու եկեղեցիները նորոգելու, ոչոնցում փառաբանում էին իրանց „բարեպաշտութիւնը“...

Դրանից յետոյ աչքի է խփում „Էջմիածնի ուսումնական յանձնաժողովի“ մասին լուրը, որ այս է։

«Յանձնաժողովը որ լուծուած էր, վերակազմուեց հրամանով վեհ. կաթուղիկոսի հետեւեալ կերպ. նախագահ Կարապետ Կոստանեանց տեսուչ Էջմիածնի Գեորգեան ճեմարանի. այլ անդամներ Յովհաննէս Տ. Միրաքեան, Կարապետ աբեղա Տէր-Մկրտիչեան, Յովհաննէս Յովհաննէսեան, Տիրայր աբեղայ Տ. Յովհաննէսեան»...

Էլ փտածները մնաց, ինչու Վեհափառը մի հրաւէր չէ կարդում։

Այդ լուրի մասին „Մուրճը“ աւելացնում է սոյն իրաւացի դիտողութիւնը։

Արձանագրելով հանդերձ այս նշանակումները, մենք կը կրկնենք նոյնը, ինչ ասել էինք նոյն յանձնաժողովի նախորդ կազմի մասին, այն է, որ «մեզ հարկաւոր է ներկայ ուսում. մասնաժողովից լաւելի կայուն մի հաստատութիւն, մի «ուսումնական հոգաբարձութիւն», որի անդամները ընտրուած կը լինին առնուազն բոլոր թեմական դպրոցների հոգաբարձութիւններից, նախագահութեամբ վեհ. կաթուղիկոսից նշանակուած մի անդամի։ Իսկ ճանաչել որ եւէ բարոյական հեղինակութիւն շարունակ փոփոխուող եւ պատահական անձերից բաղկացած մի ուսումնական մասնաժողովի համար, որի կոչումը պիտի լինէր ղեկավարել հայոց ուսումնարանները (մոռանում՝ ասել» կոպար—կոպալով սպանել հայ ուսուցչութիւնը) մենք չենք կարող եւ չենք ցանկանալ։

Ինչ հեղինակութիւն որ ունեցան անցեալ կազմերը եւ. ինչ որ շինեցին նորա (քանդեցին ի հարկէ ամէն ինչ) նոյնը սպասում ենք եւ մասնաժողովի այժմեան կազմից. թերեւս այժմեանի կատարելիքը աւելի եւս չնչին, եթէ չասենք վնասակար լինի, եթէ ի նկատի ունենանք մասնաժողովը կազմող անդամների անձնաւորութիւնները։

Այստեղ արժէ աւելացնել „Աթոռ Մոսկէսի դպիրք և փարիսեցիք նստան“...

*** Ներսեսեան դպրոցի տեսչի պաշտօնակատարի պաշտօնով ընտրուել է պ. Յով. Սաղաթելեանը։

Հայերէն սովորեց պ. Սաղաթելեանը, չէ՞ որ երկու բառ կակազել չը գիտէր։ Գէորգեան ճեմարանի, ուր նա մի ժամանակ տեսչի օգնական էր, նախկին վռնտուած սաները (միշտ լաւերն են որ վռնտուել են և վռնտւում են) շատ էլ գոհ չէին նրա երերուն վարմունքներից։

*** Բայց թողնենք քիչ Կովկասը և տեսնենք թէ թերթերը ինչ են խօսում մեզ—պարսկահայոցս մասին։ Ուզում եմ այս անգամ մէկ կողմը թողնել „Մշակի“ № 133-ի „Վնասակար հոսանք“ յօդուածը, որի վերջում եղող խօսքերը թող հասնի ում որ ուղղուած են, մի կողմ եմ թողնում նոյնպէս նոյն թերթի № 134-ի թղթակցութիւնը Թաւրիզից որում պարզ յայտնւում է թէ Թաւրիզի առաջնորդ Սուքիասի կոնսիստորա սարքելու նպատակը՝ իր քմահաճոյքները օրէնքի քողով դիմակաւորելն է... մի կողմ թողած դրանք, պարսկահայ ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում

սոյն բողոքագրի վերայ, որ արտատպում ենք „Մշակ“ № 133-ից։

Թավրէզ. սեպտ. 11

«Սրանով գալիս ենք հրապարակով յայտնելու՝ մեր դժգոհութիւնը Թէմիս առաջնորդ Սուքիաս եպիս. Պարղեանի այս օրուայ՝ խաչվերաց տօնի առիթով տուած քարոզի դէմ, որ բազմաթիւ բանիմաց անձնաւորութիւնների ներկայութեամբ Թոյլ տուեց իրան սրբապղծել եկեղեցին յիշողներ եւ լուտանքներ արտասանելով պատարագի միջոցին մի ամբողջ կուսակցութեան եւ ազգի ցաւերի մասին խորհողների հասցէին, որը մենք ամօթ ենք համարում կրկնել։ Բողոքելով Թեմական առաջնորդի դէմ, հրաւիրում ենք հոգեւոր բարձր իշխանութեան ուշադրութիւնը։

Ստորագրութիւններ.

Այս բողոքի մէջ յիշուած ամբաստանութեան՝ ճշմարտութիւնը հաստատւում է ուրիշ թերթերով՝ իսկ։ Սրբազանի ձեռնադրեալն է նաև այն Արսէն վարդապետը, որ այժմ Սալմաստի եկեղեցւոյ բեմերից նոյնատեսակ հայհոյանքներ է տեղում (տես „Շաւիղի“ № 46 ներքին լուրերում) մարդկանց դէմ։

Ո՞ւր ես, Քրիսոս, քո խարազանով, որ դուրս վռնտես տաճարից՝ սեղանդ պղծողները։

** Այդ միևնոյն մարդը, որ իր անկարգութիւններով չափը անցկացրեց և որին եթէ Կաթուղիկոսը հեռացնի, անշուշտ մի ուրիշ դրանից վատը պիտի ուղարկի—այդ միևնոյն եպիսկոպոսը, մի շրջաբերական է ուղարկել տպելու „Արձագանքում“, յայտնելով որ ուզում է երկու քարոզիչ վարդապետներ ունենալ և որ, Բագուի Մարդասիրական ընկերութիւնը հարկաւոր է որ նրան օգնի։

Պիտի տեսնէք որ Բագուի Մարդ. ընկերութիւնը կանի սրբազանի ուզածը. որովհետև այդ և ուրիշ այդպիսի ընկերութիւններ, որոնք բարեգործական անունն են կրում Կովկասում, վարդապետների և աստուածաբանների շատ են սիրում։

Բայց չէ՞ լինի թէ Սուքիաս սրբազանի գրպանն էլ ծակուել է, որպէս Էջմիածնի գանձարանի յատակը. այդպիսի դէպքում արժէր որ Մարդ. ընկերութիւնը փութով կատարէր Դավրէժի առաջնորդի խնդիրը։

**Քանի որ հոգեւորականների մասին ենք սկսել խօսել, հաղորդենք մի քանի լուրեր էս։

«Խորէն՝ եպիս. Ստեփանէին Նորին Վեհափառութիւնը պատուիրեց հեռանալ Խրիմու Ս. Խաչ վանքը“։

Դա մի վանք է, որի մէջ թշուառ Ստեփանէն երկար տանջուեց միայնակ և աշխարհից հեռու։ Էջմիածնի վանքում միակ աշխոյժ և միակ համալսարանական եպիսկոպոսն էր և ահա նրան էլ հեռացնում են։ Գնա, սրբազան, գնա մեղքերդ քաւիր, ինչ գործ ունիս Էջմիածնի արդար անձերի մէջ։

Այժմ մի այսպիսի լուր, որ հաղորդում է „Նոր-Դարը“.

«Աշոտ վարդապետ Շախեանցը, որ Ալէքսանդրապոլի յաջորդ է, ականտկուռ ոսկէղօծ լանջական խաչ ստացաւ մի կոնդակով ի խրախոյս իւր եռանդուն գործունէութեան։

Աշոտ վարդապետին ճանաչելու թշուառութիւնն ունենք, որքան քաջալերւում է ուրեմն ագահութիւնն ու պորտաբոլծութիւնը, որ արժանանում է ոսկէղօծ լանջական խաչի իսկ։

Զզուեցրին մեզ այդ հայ հոգեւորականները։ Թող քաջ գիտենան, որ կը գայ օրը, երբ իրանց սնունդ տուող գարշ մթնոլորդը կը մաքրուի և վայ նրանց, թող առայժմ արշաւեն ասպարիզում, քանի որ գրաւել են նրան։

**Հայոց Վեհ. Կաթուղիկոսի տեղից շարժուելը յետաձգուած է դեռ։ Թող նստի, Էջմիածնից դուրս տեղ չը կայ։

**№ 43 „Տարազի“ մէջ ուշադրութեան արժանի կայ երկու բան, առաջինը՝ մի սքանչելի նրբութեամբ և շատ լաւ տպագրուած պատկեր՝ Լերմոնտովի „Հրեշտակ“ բանաստեղծութեան գլխին։ Իսկ երկրորդը՝ հետևեալ լուրը.

«Շուշուց մի խումբ տիկինների կողմից օր. Վ. Զաքարեանը հաղորդում է մեզ, որ նրանք վճռել են առաջիկայ տարին ստանձնել «Աղբիւրի» տպարանական ծախսը»։

Մի շատ ուրախալի երևոյթ, օրինակելի բան, որի համար մենք էլ յայտնում ենք մեր ուրախութիւնը. սակայն չէր կարելի արդեօք որ Թիֆլիսի մի խումբ օրիորդներ էլ, որոնք կարող էին—միանային և „Աղբիւրի“ շուրջը հաւաքուելով՝ խմբագրէին նորան իւր նպատակներին յարմար։ Թող մտածեն մեր այս առաջարկի վերայ ձեռնհաս մանկավարժուհիները. ժամանակ է որ մեր այդ միակ մանկական թերթը ծառայի իւր կարևոր նպատակին, փոխանակ ասպարէզ դառնալու անմիտ և անշնորհք գրուածքների։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Չինաստանը նոյ. 17-ին ուղարկեց Պէկինի ամերիկական դեսպանին պաշտօնական առաջարկ, խաղաղութիւն խնդրելով. այդ առաջարկը դեսպանի ձեռքով կը յանձնուի Ժապօնական կառավարութեան Տօկիօում։

—Անտոն Ռուբէնշտէյն մեծ երաժշտի Թաղումը շատ մեծ շքեղութեամբ կատարուել է Պետերբուրգում, եղել են բազմաթիւ պսակներ, ի շարս որոց նաև Ռուսաց Թագաւոր Կայսրի, Ն. մեծութիւն օգոստափառ Ծնողի եւ շատ ուրիշ իշխանութիւնների եւ իշխանների, ընկերութիւնների եւ հաստատութիւնների կողմից։

—Նոյ. 17-ին Թիֆլիզում մի բաւական զօրաւոր երկրաշարժի ցնցումներ տեղի ունեցել. վնասներ բաւական եղել են։

—Ռուսաց օգոս. Կայսեր գահակալութեան մանիֆեստի մէջ կարդում ենք այն ուրախալի լուրը, որ 63 թվի լիհական ապստամբութեան մասնակցող բոլոր անձերին Թոյլատրուածէ ապրել ուր որ կամենային։ Այդպիսով նրանք՝ ազատուած են համարվում արտաքսանքից։

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ. Խանզադէին. Ձեր ուղարկածները տպուելու են։ »Դավրեժի հայոց տնտեսական, բարոյական եւ հասարակական վիճակը» վերնագրով մեր յօդուածը ուրախութեամբ կը տպագրենք. ուղարկեցէք։ Թարգմանականների համար ձեզ առանձին կը գրենք։

Դավրէժ. Վ.Վ. ինչու էք կարծում որ ձեր ամէն մի յիմար յօդուած «պարտաւոր» ենք տպագրել. խրատները ձեզ պահեցէք. սովորեցէք քաղաքավարութիւն, դա յօդուած գրելուց աւելի լաւ է։

Ուրմիա. Ե. Ձեր յօդուածի մասին յետոյ. սպասեցէք դեռ։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

HOTEL
DE CONSTANTINOPLE

A RECHT

DE MIKHAIL PANIDISI

Il est récemment ouvert à Rècht près de la poste persane un hôtel européen. Des chambres meublées pour les hôtes, des lits et de toutes sortes de confortabilités, d'excellents mets européens et persans.

PRIX ACCESSIBLES

L'Hôtel aura dès l'année de 1895 les journaux „CHAVIGH“et“CASPIE“
Le public est prié de l'avoir en vue.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՀԻՒՐԱՆՈՑ

(HOTEL DE CONSTANTINOPLE)

ՌԱՇՏՈՒՄ

ՄԻՔԱՅԷԼ ՓԱՆԻԴԻՍԻ

Նոր բացուած է Ռաշտում եւրոպական հիւրանոց, պետական փոստատան մօտ, ընդունւում է և հիւրեր դիշերելու, տալով ամեն տեսակ յարմարութիւն, պատրաստւում է մաքուր եւրոպական և պարսկական կերակուրներ։

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Հիւրանոցը 95 թուից կստանայ „Շաւիղ“ և „Каспій“ լրագիրները։

Հրաւիրւում է հասարակութեան ուշադրութիւնը։

1—2